ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

« 12 » հունիսի 2023թ.

ՈՒՂԵՐՁ
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

«Հանրային տրանսպորտ այսօր» քաղաքացիական նախաձեռնության 2023 թվականի մայիսի 12-ի դիմումով ներկայացված՝ Սպիտակ համայնքի թվով 507 բնակիչների նախաձեռնությամբ հայտնվել է.

«Սպիտակ խոշորացված համայնքի 21 բնակավայրերից 12-ում հանրային տրանսպորտը բացակայում է: Մյուս համայնքների դեպքում պաշտոնապես, այսինքն սահմանված կարգով ընտրված ուղևորափոխադրող չկա, սակայն փոխադրում փաստացի իրականացվում է: Բացառություն է կազմում Սպիտակ քաղաքը, որտեղ հանրային տրանսպորտը սպասարկում է քաղաքացիներին օրինական հիմքերով:

Խոշորացման արդյունքում առաջացած այս խնդիրն արդեն մեկ տարուց ավել է չի լուծվում:

Սույնով հայտնում ենք մեր աջակցությունը նախաձեռնող խմբին ներկայացնել հարցը ներառելու Սպիտակ համայնքի ավագանու օրակարգում:

Հարցը ներկայացնել երկու կետից՝

1. Սպիտակ համայնքի ավագանին դիմում է ՀՀ կառավարությանը ուղերձով, որպեսզի Կառավարությունը քայլեր ձեռնարկի Սպիտակ խոշորացված համայնքի համար ավտոբուսային պարկ ստեղծելու համար: Այս նպատակին ռեսուրսներ հատկացնելու համար պետք է գնահատել համայնքում արդեն իսկ ներկայացված և հաստատված սուբվենցիոն ծրագրերի նպատակահարմարությունը և ծախսերի արդյունավետությունը (օրինակ՝ արդեն մի քանի անգամ ֆինանսավորվող Մեծ Պարնի բնակավայրի մշակույթի պալատի վերանորոգումը):

2. Հանրային տրանսպորտ չունեցող բնակավայրերի տրանսպորտի խնդիրը լուծելու կամ մեղմելու նպատակով համայնքապետարանի կողմից գումար հատկացնել այս բնակավայրերում տրանսպորտ ապահովելու նպատակով այնքան ժամանակ մինչև տրանսպորտի խնդիրը կկարգավորվի 1-ին կետի համաձայն»:

Հաշվի առնելով վերը նշված նախաձեռնությունը և այն հանգամանքը, որ համայնքների միավորումից հետո Սպիտակ համայնքի ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու համար հայտարարվել է երեք մրցույթ, որոնք չեն կայացել մասնակից չլինելու պատճառով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին խնդրում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը Սպիտակ համայնքի ներհամայնքային

ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների խնդիրը լուծելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ, այդ թվում՝ ավտոբուսներ ձեռք բերելու համար պետական բյուջեից համայնքին ֆինանսական միջոցների հատկացման կամ ավտոբուսներ նվիրաբերելու եղանակով:

ԿՈՂՄ (10)	ԴԵՄ (0)	ՁԵՌՆՊԱՀ (6)
ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ		ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ		ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԿԱՐԻՆԵ ԴԻԼԱՔՅԱՆ		ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ԱՐԱՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ		ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ		ՋԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ		
ՄԱՆՈՒՇ ԱԹՅԱՆ		
ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ		
ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ